ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավար՝ Դավիթ Խուդաթյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝ Դիանա Գասպարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Ֆելիքս Պողոսյանի**
- **ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ՝ Ռաֆիկ Բոխյանի**
- **ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ՝ Արթուր Բդոյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական ղեկավարների**
- **ՀՀ էկոնոմիկայի նախարարության <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ–ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման Արմավիրի բաժնի գլխավոր մասնագետ՝ Արզուման Տոնոյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզից խաղող մթերող կազմակերպությունների ներկայացուցիչների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին,առ 01.09.2023թ.դրությամբ

/Վարազդատ Մկրտչյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում խաղողի մթերման գործընթացի կազմակերպմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում փաստացի շահագործվող հանքավայրերի գործունեության օրինականության վերաբերյալ

/ Արթուր Այվազյան –ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ/

5. Հայտարարություններ՝

ա/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվող և իրականացվելիք շինարարական աշխատանքների ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
ՀՀ Արմավիրի մարզպետ/

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 15–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ի 30–ի N647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 15–ի նիստի օրակարգը :**

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը զեկուցեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին, առ 01.09.2023թ դրությամբ /զեկույցը կցվում է/:

Համաձայն զեկուցմամբ ներկայացված տեղեկատվության, 2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 9901336,9 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 7980195,5 հազ. դրամի համեմատ: Ավել է պլանավորվել 1921141,4 հազ. դրամով: 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 8294729,9 հազ. դրամ , 31.08.2022թ թվականին հավաքագրված 6345596,3 հազ. դրամի համեմատ. ավել է հավաքագրվել 1949133,6 հազ. դրամով, կատարվել է 83,8%-ով, նախորդ տարվա 79,5%-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 3223692,1 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 3234685,4 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 10993,3 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 2754986,2 հազ. դրամ , 31.08.2022թ թվականին հավաքագրված 2288602,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 466383,5 հազ. դրամով, կատարվել է 85,5%-ով, նախորդ տարվա 70,8%-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 726583,8 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 758388,5 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 31804,7 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 514862,3 հազ. դրամ , 31.08.2022թ թվականին հավաքագրված 426618,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 88243,9 հազ. դրամով, կատարվել է 70,9%-ով, նախորդ տարվա 56,3%-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 1278619.0 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 1184451.4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 94167,6 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1095207,0 հազ. դրամ , 31.08.2022թ թվականին հավաքագրված 906272,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 188934,9 հազ. դրամով, կատարվել է 85,7%-ով, նախորդ տարվա 76,5 %-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 150711,4 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 160665,3 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 9953,9 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 180683,4 հազ. դրամ , 31.08.2022 թվականին հավաքագրված 142633,2 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 38050,2 հազ. դրամով, կատարվել է 119,9%-ով, նախորդ տարվա 88,8 %-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 58120,0 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 52675,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 5445,0 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 62506,1 հազ. դրամ , 31.08.2022 թվականին հավաքագրված. 56472,6 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 6033,5 հազ. դրամով, կատարվել է 107,5%-ով, նախորդ տարվա 107,2%-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 132070,6

հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 132560,4 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 489,8 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 120041,4 հազ. դրամ , 31.08.2022 թվականին հավաքագրված 123160,5 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 6880,9 հազ. դրամով, կատարվել է 90,9%-ով, նախորդ տարվա 85,4%-ի համեմատ:

2023թ-ի 3-րդ եռամսյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 723371,9 հազ.դրամ՝ 2022թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 654887,8 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 68484,1 հազ. դրամով, 31.08.2023թ դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 582505,4 հազ. դրամ , 31.08.2022 թվականին հավաքագրված 458309,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 124195,7 հազ. դրամով, կատարվել է 80,5%-ով, նախորդ տարվա 70,0%-ի համեմատ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն անդրադառնալով զեկուցմամբ ներկայացված տեղեկատվությանը՝ նշեց, որ ընդհանուր հավաքագրումների բարձր ցուցանիշ է գրանցվել: Մասնավորապես բացարձակ թվով 654 մլն ավել դրամ եկամուտ է հավաքագրվել նախորդ տարվա համեմատ, նշելով, որ հավաքագրված գումարի ծանրակշիռ մասը արդյունք է իրականացված վարչարարությանը: Նա նշեց, որ մարզի համար թիրախային ցուցանիշը բնականաբար ամբողջությամբ 100 տոկոս ցուցանիշի կատարումն է ընթացիկ տարում առկա պլանավորումների մասով, ուստի պետք է ամեն ինչ անել բարձր ցուցանիշներ ապահովելու ուղղությամբ և մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց նույն տեմպերով և պատասխանատվությամբ շարունակել հավաքագրման աշխատանքները և ապահովել պլանավորված սեփական եկամուտների կատարողականը:

Օրակարգային երրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում խաղողի մթերման գործընթացի կազմակերպմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ զեկուցեց ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Ավազյանը/զեկույցը կցվում է/: Նա տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզում խաղողի տարածությունները կազմում են

6941,97 հա, որից տեխնիկական սորտի 5044,3 հեկտար, որից բերքատու հասակի 4941,07 հեկտար: 2023 թ կանխատեսվում է ստանալ 70-72 հազար տոննա տեխնիկական սորտի խաղողի բերք:

Խաղողի մթերման գործընթացում հստակեցում մտցնելու նպատակով մեր կողմից հավաքագրվել է տեղեկատվություն խաղողի մթերման ենթակա մնացորդային քանակությունների վերաբերյալ, որն իր մեջ ընդգրկում է խաղողագործների անվանական ցանկը, խաղողի մշակվող տարածության չափը, տեղակայման վայրը, սորտը և մթերման ենթակա խաղողի քանակը:

Համաձայն հավաքագրված տվյալների մթերման ենթակա խաղողի ընդհանուր քանակությունը կազմում է 40440 տոննա, որը պատկանում է թվով 2335 խաղողագործների: Հավաքագրված տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

ՀՀ կառավարության 07.09.2023 թվականի N 1520–Լ որոշմամբ հաստատվել է 2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները, որով սահմանվում է, որ խաղողի մթերումներն իրականացվում են մարզպետների կողմից հաստատված ցանկերով ներկայացված խաղողագործներից, իսկ մթերվող խաղողի 1 կգ–ի նվազագույն գինը կազմում է 110 դրամ:

Խաղողի մթերման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծվելու է աշխատանքային խումբ, որը կհամակարգի խաղողի մթերման ամբողջ գործընթացը:

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում փաստացի շահագործվող հանքավայրերի գործունեության օրինականության վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը /զեկույցը կցվում է/: Նա իր զեկուցմամբ տեղեկացրեց, որ ՀՀ Արմավիրի մարզում հաշվառված 32 հանքավայրերից ներկա պահին փաստացի շահագործվում է թվով 15 հանքավայր 11 բնակավայրերում, որից ավազի 7, քարի 3, բազալտի 4 և խճի 1: Մարզում փաստացի գործող հանքավայրերի գործունեության օրինականությունը, մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործումը, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության

պահանջների պահպանման, հողային հարաբերությունների բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 07.04.2023 թվականի N ՄՈ/134 – Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբի ուսումնասիրություններից պարզվել է, որ այս բնագավառում օրինախախտումները հիմնականում կապված են հողի ոչ նպատակային նշանակությամբ օգտագործման հետ:

Մասնավորապես.

1. «Կարմիր տուֆ» ՍՊԸ և «Սամ կար քար» ՍՊԸ ընկերությունները Երվանդաշատ բնակավայրում իրենց գործունեությունը ծավալում էին գյուղ. նշանակության հողերի վրա:
2. «Ֆարտոշին» ՍՊԸ ընկերությունը Բաղրամյան բնակավայրում արդյունահանում էր իրականացնում 4,72 հա գյուղ նշանակության հողատարածքներից:
3. «Օստ Շին» ՍՊԸ–ն Մերձավան բնակավայրում տնօրինել է 3 հա հողատարածք, որից 1,28 հա գյուղ.նշանակության է:

Աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ, որի ընթացքում մարզպետի կողմից հանձնարարվեց աշխատանքային խմբին, որպեսզի առաջարկվի համայնքների ղեկավարներին կարճ ժամանակահատվածում իրականացնելու հողի նպատակային նշանակության փոփոխություն:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում «Կարմիր տուֆ», «Սամ կար քար» և «Ֆարտոշին» սահմանափակ պատասխանատվության ընկերություններին հատկացված հողատարածությունների նպատակային նշանակությունները փոփոխվել են:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը հանդես եկավ հայտարարությամբ, մասնավորապես անդրադառնալով մարզի տարածքում աղբահանության իրականացման խնդրին՝ նշեց, որ համայնքների խոշորացման գործընթացից հետո աղբահանության ոլորտում եղել են բարելավումներ: Համայնքներից ոմանք այդ գործընթացը կազմակերպում են սեփական ուժերով, մյուսները պատվիրակված ծառայությունների միջոցով: Մարզպետը

շեշտեց, որ հեռավոր բնակավայրերում առավել խիստ հետևողական պետք է լինել, թույլ չտալով աղբի կուտակումներ: Նա նշեց, որ ինչքան էլ խոչընդոտները պայմանավորված լինեն օբյեկտիվ պատճառներով՝ կախված տեխնիկայի ձեռք բերման հետ, միևնույն է պետք անել առավելագույնը համայնքներում աղբահանության խնդիրները պատշաճ իրականացնելու համար:

Մարզպետն անդրադարձավ նաև նորակառույց նախադպրոցական և դպրոցական հաստատությունների կահավորմանն ու շրջակա միջավայրի մաքրությանը՝ շեշտելով, որ որևէ նոր կառուցված դպրոցի կամ մանկապարտեզի շենքում հին իր կամ որևէ հին գույք չպետք է լինի, ինչպես նաև լիարժեք պետք է իրականցվեն աղբահանության և սանիտարական մաքրման գործառույթները: Յուրաքանչյուր վարչական ղեկավար պետք է ապահովի բնակավայրի մաքրությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով դպրոցական և նախադպրոցական հաստատությունների շրջակա միջավայրի մաքրության պահպանությանը, շեշտեց նա:

Մարզպետն անդրադարձավ նաև սուբվենցիոն ծրագրերի աշխատանքներին՝ նշելով, որ մարզի գրեթե բոլոր բնակավայրերում իրականացվում են սուբվենցիոն աշխատանքներ (շատ բնակավայրերում մեկից ավելի), լուծվում են բավականին խնդրահարույց հարցեր, և մեր ազգաբնակչությունը հիմնականում գոհ է, ուստի պետք է անել ամեն ինչ մեր ազգաբնակչությանը չհիասթափեցնելու համար՝ առաջարկելով համայնքերի ղեկավարներին ուշադրության կենտրոնում պահել ոլորտային պատասխանատուների գործունեությունը և հետևել աշխատանքների ընթացքին, որպեսզի մինչև շինարարական սեզոնի ավարտը աշխատանքներն ավարտվեն:

Մարզպետը ներկայացրեց նաև խաղողի մթերման գործընթացի հետ կապված խնդիրները, նշելով որ ՀՀ կառավարության կողմից իրականացվում է աջակցության բազմաբովանդակ և ծավալուն ծրագիր: Հանգամանորեն ներկայացնելով աջակցության ծրագրի որոշակի մանրամասները, մարզպետը մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց առավել սրտացավ և ուշադիր մոտեցում ցուցաբերել ազգաբնակչության կողմից խաղողի մթերման հետ կապված հարցերին օրենսդրությանը համապատասխան լուծումներ տալու նպատակով:

Օրակարգային հարցերի քննարկման և հայտարարությունների ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 26.09.2023 17:57:42 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505
ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան